

**ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի ղեկավարը հայտարարում է**

**մրցույթ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի, աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-2/, աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի /ծածկագիր 3.3-1/ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար**

ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1):  
Աշխատակազմի քարտուղարը համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է ՏԻՄ ռազմավարական և կազմակերպչական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, լուծում աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն կրթությամբ համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար

ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքացիական կամ հայացողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2015թ. հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական կառավարման ոլորտի կամ համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավար պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ: Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն: Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2013թ. փետրվարի 27-ին ժամ 12<sup>00</sup>, Արգավանդի գյուղապետարանի շենքում:

2. ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-2/:  
Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, կատարում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլխտերի պայքարի աշխատանքներ: Սույն պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝ միջնակարգ կրթություն, պաշտոնի պայմանագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն: Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2013թ. փետրվարի 27-ին ժամ 14<sup>00</sup>, Արգավանդի գյուղապետարանի շենքում:

3. ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդի գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /ծածկագիր 3.3-1/:  
Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները, ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնական և անխափան աշխատանքը: Սույն պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝ միջնակարգ կրթություն, պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն: Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2013թ. փետրվարի 27-ին ժամ 16<sup>00</sup>, Արգավանդի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ծևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները, բնօրինակների հետ միասին,
- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թ-ի մարտի 3-ի N310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները,
- մեկ լուսանկար 3X 4 չափի
- անձնագրի պատճեն:

Մրցութին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունները ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդի գյուղապետարան: ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄ վարչություն (հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71.

հեռ. 0237 2-76-49, 2-07-70):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10<sup>00</sup> ից 16<sup>00</sup>, բացի շաբաթ և կիրակի օրերից:  
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2013 թվականի փետրվարի 24-ը: